ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 փետրվարի 2024 թվականի № 64-Ա

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՐԶԱԿԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 32.1-ին հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման № 1 հավելվածի 85-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արզականի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 6-ի № 3 որոշումը, եզրակացությունը և *Արմենուհի Բաբաջանյանի*՝ 2024 թվականի փետրվարի 6-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. ***Արմենուհի Արմենակի Բաբաջանյանին*** 2024 թվականի փետրվարի 9-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արզականի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր երկու տարի երկու ամիս երեք օր ժամկետով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արզականի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի ազատման և տնօրենի պաշտոնակատարի նշանակման մասին»* № 338-Ա որոշման 2-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2024 թվականի փետրվարի 9
ք. Հրազդան